ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ
ԹԻՎ 018/2019-Լ

«ԲԱՆԲԵՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.03.2019թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ««Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքի, հաստիքացուցակի և աշխատողների պաշտոնային դրույքաչափերի ու Ակադեմիայի 2017 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատման մասին» Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի ԿԽ-001/17/2 որոշման Հավելված 1-ը և ««Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի հրատարակման աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին» Արդարադատության ակադեմիայի ռեկտորի 2019 թվականի հունվարի 17-ի թիվ 002/2019-Լ հրամանի հավելվածի պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի էթիկայի կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
Արդարադատության ակադեմիայի ռեկտորի
2019 թվականի մարտի 12-ի
թիվ 018/2019-Լ հրամանի

Ռեկտոր Ս. Առաքելյան

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ
«Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Բանբեր արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսում (այսուհետ՝ Հանդես) տպագրության համար հոդվածներ նախապատրաստելու, տպագրության երաշխավորելու կամ գրախոսելու, հրատարակելու գործընթացում հեղինակները, տպագրության երաշխավորող մասնագետները, Հանդեսի խմբագրական խորհուրդը պետք է պահպանեն ստորև ներկայացվող էթիկայի կանոնները (այսուհետ՝ Կանոններ):

2. Հանդեսի նախապատրաստման և հրատարակման գործընթացը հիմնվում է գիտականության, օբյեկտիվության, արհեստավարժության, անկողմնակալության, արդարության և ազնվության սկզբունքների վրա:

3. Հանդեսի խմբագրական խորհրդի կողմից հոդվածների գրախոսումը և Արդարադատության ակադեմիայի կողմից հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքներով:

II. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Հանդեսում տպագրության համար նյութեր ներկայացնելիս հեղինակը (հեղինակների խումբը) պետք է ապահովի հետազոտության արդյունքների գիտական նորույթը և արժանահավատությունը, ինչը ենթադրում է հետևյալ սկզբունքների պահպանումը.

1) հեղինակը պետք է ներկայացնի սեփական հետազոտության արդյունքները, փոխառնված հատվածները կամ պնդումները պետք է ունենան դրանց հեղինակին և սկզբնաղբյուրին հղումներ.

2) հեղինակը պարտավոր է ներկայացնել հետազոտության արժանահավատ արդյունքները, արգելվում է ակնհայտ սխալ կամ կեղծված տեղեկություններ ներկայացնելը.

3) հեղինակը չպետք է թույլ տա հոդվածների կրկնօրինակում (հոդվածը պետք տպագրվի առաջին անգամ), հոդվածի առանձին բաղադրիչների՝ նախկինում հրատարակված լինելու դեպքում հեղինակը պետք է հղում կատարի ավելի վաղ հրատարակությանը և ցույց տա նախկին և նոր աշխատանքների տարբերությունը.

4) հեղինակը տպագրության համար չպետք է ներկայացնի այնպիսի հոդված, որն այլ պարբերականում հրատարակվելու համար գտնվում է գիտական փորձաքննության փուլում.

5) հոդվածում պետք է նշվեն հետազոտությանը մասնակցած բոլոր անձանց տվյալները.

6) հոդվածում այլ հեղինակների հետազոտությունների քննադատությունները պետք է լինեն կոռեկտ, ողջամիտ և հիմնավորված.

7) հեղինակը պետք է հարգալից վերաբերի խմբագրական խորհրդի և գրախոսի աշխատանքին.

8) հոդվածը պետք է ձևավորվի ««Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի հրատարակման աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին» Արդարադատության ակադեմիայի ռեկտորի 17.01.2019 թվականի թիվ 002/2019-Լ հրամանի հավելվածի 22-25-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:

III. ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՄԱՍՆԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Տպագրության երաշխավորող մասնագետն իրականացնում է հոդվածի անկողմնակալ գիտական փորձաքննություն, ինչը ենթադրում է հետևյալ սկզբունքների պահպանումը.

1) ներկայացված հոդվածը պետք է դիտարկվի որպես գաղտնի փաստաթուղթ, որը չպետք է տրամադրվի երրորդ անձանց՝ ծանոթանալու կամ քննարկելու համար.

2) տպագրության երաշխավորող մասնագետը պարտավոր է հետազոտության արդյունքներին տալ օբեկտիվ, հիմնավորված գնահատական.

3) տպագրության երաշխավորող մասնագետին արգելվում է որևէ կերպ օգտագործել ներկայացված նյութը սեփական կարիքների համար.

4) տպագրության երաշխավորող մասնագետը պարտավոր է հրաժարվել փորձաքննության կատարումից, եթե չի հանդիսանում համապատասխան բնագավառի մասնագետ:

IV. ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6. Հանդեսի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները կազմակերպելիս Հանդեսի խմբագրական խորհուրդը պարտավոր է.

1) տպագրության մասին որոշում կայացնելիս առաջնորդվել ներկայացված նյութի արժանահավատությամբ և գիտական նշանակությամբ.

2) հիմնավոր կասկածների առկայության դեպքում չթույլատրել տպագրության կեղծման կամ գրագողության արդյունք հանդիսացող նյութը.

3) գրախոսման համար փորձաքննություն անցնող նյութը չհրապարակել, չփոխանցել այլ պարբերականներ կամ որևէ կերպ չօգտագործել սեփական կարիքների համար.

4) փորձաքննություն անցնող նյութի հեղինակին հնարավորություն ընձեռել հիմնավորելու իր հետազոտական դիրքորոշումը.

5) Հանդեսի խմբագրական խորհրդի փոփոխության դեպքում չեղյալ չհայտարարել տպագրության վերաբերյալ նախորդ կազմի որոշումները:

V. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՀԱԿԱՍՈՂ ՎԱՐՔԱԳԻԾԸ

7. Էթիկայի կանոններին հակասող վարքագիծ է համարվում՝

1) հեղինակի կողմից անձնական կամ այլ կապերի օգտագործմամբ սեփական հոդվածի համար տպագրության երաշխավորության կամ գրախոսականի կազմակերպումը.

2) հոդվածները նախապատրաստելիս հեղինակների կողմից գրագողությունը և անարժանահավատ, կեղծված տվյալների օգտագործումը.

3) հեղինակի, տպագրության երաշխավորող մասնագետի կամ Հանդեսի խմբագրական խորհրդի կողմից հոդվածների վաճառքը.

4) հեղինակի կողմից համահեղինակություն վաճառելը կամ նվիրելը.

5) տպագրության երաշխավորող մասնագետի կամ Հանդեսի խմբագրական խորհրդի կողմից, առանց հեղինակների հետ համաձայնեցման, հոդվածների փոխանցումն այլ պարբերականներին.

6) տպագրության երաշխավորող մասնագետի կամ Հանդեսի խմբագրական խորհրդի կողմից հոդվածների փոխանցումը խմբագրական գործունեության հետ չկապված անձանց.

7) Կանոնների այլ խախտումները: